ձախ ափին գտնւում են Ուբոգատիա, Կապարմետ, Գուրբան, Ջանձուլ, Ադուրչա, Բազա, Դուրչա, Գոլխիտ, Կուրիդերի, Օսման-Զխալէտ, Բաշֆեոյ, Կուրիա, Կեմչիբետ, Զիլաուր, Էրսեուսա, Բարնալիֆ-Թեփէսի — բարձունքն անցնում է Կերխանեթի եւ Պարեխի առուները, որոնք բոլորն էլ համանուն գեղերով եւ սրանց պարագանիրով միանում են Մուրղուլին:

Սպերից մինչեւ Մուրղուլ 1—200 հին բովեր կան, որոնցից ամէն մինը 4—5000 տարի բանել են եւ նրանց միջից անբաւ մետաղ են դուրս բերել: Ամէն մի հանքբան որ ուսումնասիրել է Ճորոխի Աւազանի բովերը, նա յայտնել է, որ այդ բովերը հին են եւ դարերով գործածուած: 1820 թ. մինչեւ 1880 թ. վաթսուն տարի, այդ հանքերը բոլորովին չկարողացան բանացնել, շատերը մինչեւ այս օր էլ չեն գործում:

Ճորոխը Արդվինից ցած գալով՝ Իսրայի սահմանը անցնելուց յետոյ, աջից ընդունում է Ախալ-դաբա առուակը համանուն գեղից, Մուղուլ վտակն անցնելուց յետոյ, աջից ընդունում է Դեւիս[1] վտակը, որ ի-

---

1 Դեւիս անունը ենթադրելի է, թէ Դեւ, Դեւք բառից ծագած լինի: Այնպիսի կուսական անտառներով է պատած Դեւիսի աւազանը, այնպիսի մութ ու մռայլ անտառներ ունի, որ սրանց սարսափը միայն կարող էր մարդկանց գանգում ու սրտում զբաղցնել Դեւերի-սատանաների գաղափարը: Այս վտակի ափի Դեւսկել, Դիվցխել առուակները յիշեցնում են Դեւիսի անունը: